352(47.925)
Հ - 11
2802-10

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

Յերքաղխորհրդի նորընտիր պատգամավորներին

ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՔԱՂԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԱԶՄԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931

Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0212323

Տպ. Պետհրատ. Պատվեր 6120 (բ). Գլավ. 11. Տիրաժ 1500.

703 - 2010
352(47.925)
Յ-11
1454

ՔԱՂՎԱԾՔ

Քաղաքային խորհուրդների կանոնադրությունից (հաստատված է ՀՍԽՀ 5-րդ գումարման ԿԳԿ.-ի 3-րդ նստաշրջանի կողմից *1928* թ. հուլիսի *7*-ին (ՍԿԺ *1928* թ. № *10*, հոդ. *106*)

ԳԼՈՒԽ 7

Քաղաքային խորհրդի սեկցիաները ու հանձնաժողովները

ԳԼՈՒԽ 8

Քաղաքային խորհրդի անդամների յեվ փոխանդամների իրավունքները ու պարտականությունները

ԳԼՈՒԽ 9

Պատգամավորների կապը ընտրողների հետ

09 SEP 2013
90.079
3
Ք-

ՅԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Քաղխորհրդի անդամների, փոխ-անդամների և սեկցիաների անդամների աշխատանքները կանոնավոր և օրինական հունի մեջ դնելու առաջին նախապայմանը հանդիսանում է այն, վոր նրանք լիովին իրազեկ լինեն սեկցիաների, Քաղխորհրդի անդամների իրավունքներին և պարտականություններին: Այդ նպատակին հասնելու համար առանձին գրքույկով հրատարակվում է քաղվածք «Քաղաքային Խորհուրդների 1928 թ. կանոնադրությունից», վոր լուսաբանում է սեկցիա-

ների, հանձնաժողովների, Քաղխորհրդի անդամների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կոդմակերպչական այն ձևերը, ըստ վորում պատգամավորները պետք է կապվեն ընտրողների հետ։ Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր պատգամավոր լրիվ չափով ուսումնասիրի առաջարկված կանոնները և դեկավարվի նրանցով։

ՅԵՐԵՎԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ-ԲԱԺԻՆ

1931 թ.—Հունվար

VII

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ.

53. Քաղաքային խորհրդի բոլոր անդամներին քաղաքային խորհրդի գործնական աշխատանքներին մասնակից անելու, քաղաքային խորհրդի տեսչության վերաբերյալ հարցերը նախապես մշակելու և քաղաքային խորհրդի ու նրա նախագահության առանձին պատվերները կատարելու համար հիմնվում են քաղաքային խորհրդի սեկցիաներ, վորոնց քաղաքային խորհրդի

անդամները մասնակցում են կամավոր ընտրության հիմունքներով, սակայն խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է առնվազն մեկ սեկցիայի անդամ լինելու։

Սեկցիաները աջակցում են քաղաքային խորհրդի ամբողջ աշխատանքին, այլ և հսկում են դործադիր մարմինների աշխատանքների վրա, սակայն սեկցիաների վարչությունները ուժի մեջ են մտնում միայն քաղաքային խորհրդի կամ նրա նախագահության կողմից հաստատվելուց հետո։

Յուրաքանչյուր սեկցիայի քանակական կազմը վարչում է քաղաքային խորհուրդը։

54· Սեկցիաների թիվը սահմանում և նրանց մի-

ջև աշխատանքը բաշխում է քաղաքային խորհուրդը այս կանոնադրության 40 հոդ· «գ» կետի կարգով։

55· Քաղաքային խորհուրդը պարտավոր է հիմնել հետևյալ սեկցիաները.—

ա) կոմունալ տնտեսության,

բ) ֆինանսական-բյուջետային,

գ) կուլտուր-սոցիալական·

դ) կենցաղային,

ե) բանվորա-գյուղացիական տեսչության,

զ) կոոպերատիվ-առևտրական

ը) դինամոական։

Բացի սրանից կարող են հիմնվել նաև այլ սեկցիաներ (իրավական, բնակարանային, աշխատանքի, ար-

գյուղատնտեսական, սոցիալական ապահովության, և այլն), յուրաքանչյուր սեկցիաները անհրաժեշտ համարվեն:

56. Բացի քաղաքային խորհրդի անդամներից՝ յուրաքանչյուր սեկցիայի կազմի մեջ մտնում են նաև հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնց թիվը որոշում է քաղաքային խորհրդի նախագահությունը.—

ա) բանվորական ձեռնարկությունների,

բ) արհեստակցական կազմակերպությունների,

գ) կանանց պատգամավորական ժողովների,

դ) կարմիր բանակայինների,

ե) հասարակական կազմակերպությունների,

զ) այլ և այն առանձին աշխատավորները և ընտրողները—պերսոնալ կերպով, որոնց աշխատանքը սեկցիաներում ցանկալի կհամարվի:

Ծանոթություն 1. Սեկցիաների բոլոր անդամներն աշխատանքի ընթացքում հավասար իրավունքներ են վայելում:

Ծանոթություն 2.—Սեկցիաների և յենթասեկցիաների առանձին նիստերին կարող են հրավիրվել քննության յենթակա հարցին իրազեկ անձինք, փորձագետներ և այլն, որոնք խորհրդակցական ձայնի իրավունք են վայելում:

57. Յուրաքանչյուր սեկցիայի հիմնական նպատակն է բարելավել աշխատանքի համապատասխան ճյու-

գը, սեկցիայի անդամներին դրավել մասսայական աշխատանքի ասպարեզ, նրանց շարքերից առաջ քաշել պրակտիկ աշխատակիցներ խորհրդային աշխատանքի համար։

58· Քաղաքային խորհուրդը և նրա նախագահությունը կարող են ժամանակավորապես առանձին պատգամավորներին ազատել սեկցիաների աշխատանքից։

59· Սեկցիաների նիստերում նրա բոլոր անդամները վճռողական ձայնի իրավունք են վայելում։

Ա· ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՆԵՐ

60 Սեկցիան իր միջից ընտրում է բյուրո, իր լիազորությունների ժամանակամիջոցով, նախագահի, քարտուղարի և վոչ ավելի քան 5 անդամի կազմով։

Ծանոթություն· Բյուրոյի կազմի մեջ պարտադիր կերպով մտնում է քաղաքային աշխատանքի համապատասխան ճյուղի գլխավորը, սակայն նա չի կարող սեկցիայի բյուրոյի նախագահ լինել։

61· Բյուրոն սեկցիայի կարգադրիչ և գործադիր մարմինն է և իր աշխատանքի համար պատասխանատու է սեկցիայի առաջ։

Բյուրոները նախապատրաստում են սեկցիայի քննության յենթակա հարցերը և հավաքում են, սիստեմատիզացիայի յեն յենթարկում այդ նպատակով անհրաժեշտ նյութերը, հաշվառման են յենթարկում սեկցիաների և նրանց հանձնաժողովների անդամներին, այլ և կատարում են սեկցիայի անդամների և սեկցիայի նիս-

տերին յեկող անձանց հաշվառում, սեկցիաների վարչությունները ուղարկում են ըստ պատկանելության, հսկում են այդ վարչությունների կատարման վրա և իրենց նախագահի միջոցով մասնակցում են քաղաքային խորհրդի նախագահության նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով։

Բ. ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

62. Սեկցիաների տեսչության առարկաներն են.—

ա) քննել տնտեսության և կառավարչության համապատասխան ճյուղի աշխատանքի պլանները.

բ) լսել համապատասխան մարմինների հաշվետվությունը և տալ նրանց մասին իր յեզրակացությունները

քաղաքային խորհրդի պլենումին կամ նախագահությանը.

գ) քննել քաղաքային խորհրդի գործադիր մարմինների ընթացիկ աշխատանքի հիմնական հարցերը և նրանց մասին տալ իր յեզրակացությունները.

դ) ծանոթանալ հիմնարկներում և ձեռնարկություններում կատարվող՝ տնտեսության, կառավարչության համապատասխան ճյուղի վերաբերյալ աշխատանքին.

ե) սեկցիայի անդամներին ամրացնել քաղաքին ստորադրվող ձեռնարկություններին ու հիմնարկներին՝ աշխատանքի տվյալ ճյուղում նրանց գործունեությունը հսկելու և աջակցելու համար.

է) լսել բյուրոների զեկուցումները սեկցիաների պլաններին ու վորոշումները կատարելու վերաբերմամբ.

ը) անհրաժեշտության դեպքում ընտրել իր մշտական հանձնաժողովներ (յենթասեկցիաներ) գործադիր ապարատի առանձին մասերի հետ տնտեսության և կառավարչության համապատասխան ճյուղում առավելագույն կապ պահպանելու համար.

թ) ընտրել ժամանակավոր հանձնաժողովներ առանձին հարցերը մշակելու համար.

ժ) քննել աշխատանքի տվյալ ճյուղի վերաբերյալ վորոշումների և ձեռնարկումների այն նախագծերը, վոր սեկցիաների առանձին անդամները մտցնում են սեփական նախաձեռնության կարգով, ինչպես նաև՝ ներկա-

(1454) 703-2010

յացվում են հիմնարկների, կազմակերպությունների և առանձին քաղաքացիների կողմից.

ի) մասնակցել քաղաքային աշխատանքի հիմնական հարցերի վերաբերյալ պլանների ու նախագծերի մշակմանը, այլ և քաղաքի գործերի վերաբերյալ խորհրդակցություններին, կոնֆերենցիաներին և հանձնաժողովներին.

լ) վերստուգման յենթարկել Քաղաքային Խորհրդի բաժինների աշխատանքները, ինչպես նաև քաղխորհրդին յենթակա բոլոր հիմնարկներն ու ձեռնարկությունները:

Ծանոթություն.— Քննությունն ու վերստուգությունները կատարվում են քաղաքային խորհրդի

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ — ССРА им. А. Мясникяна

նախագահության առաջարկությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, սակայն յուրաքանչյուր առանձին դեպքում ստանալով քաղաքային խորհրդի նախագահության թույլտվությունը:

63. Նախնական մշակում պահանջող բոլոր հարցերը համաձայնության սեկցիաների քննությանն են հանձնում քաղաքային խորհրդի նախագահությունը և քաղխորհրդի բաժինները—քաղաքային խորհրդի նախագահության միջոցով, ինչպես նաև սեկցիաները կամ նրանց անդամները սեփական նախաձեռնությամբ, այդ մասին հաղորդելով նախագահությանը:

64. Սեկցիաները՝ քաղաքային խորհրդի նախագա-

հության վարչությունների համաձայն չլինելու դեպքում իրավունք ունեն հարցը փոխադրելու քաղաքային խորհրդի պլենումը ի քննություն:

65 Սեկցիաների աշխատանքների ընդհանուր կարգն ու պլանը մշակում են իրենք, սեկցիաները քաղաքային խորհրդի աշխատանքների ընդհանուր պլանի հիման վրա և ներկայացնում են քաղաքային խորհրդի պլենումին ի հաստատություն:

66. Սեկցիաների նիստերը հրավիրվում են որոշումային պլանի համաձայն, առնվազն յերկու չաբաթը մեկ անգամ:

67. Յերկու կամ մի քանի սեկցիաների վերաբերվող ընդհանուր հարցերը քննելու համար քաղաքային խոր-

հրդի նախագահության առաջարկությամբ հրավիրվում են համապատասխան սեկցիաների կամ բյուրոների միջսեկցիոն նիստեր։

VIII

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ՓՈԽԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

68. Քաղաքային խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է մասնակցելու քաղաքային խորհրդի, նրա սեկցիաների և հանձնաժողովների բոլոր նիստերին և կատարելու նրանց բոլոր հանձնարարությունները։

Ծանոթություն. Այն հիմնարկները, ձեռնարկությունները և կազմակերպությունները, որտեղ աշխատում են քաղաքային Խորհրդի անդամները, պարտավոր են վերջիններին աշխատանքից ազատելու այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է քաղաքային խորհրդի, նրա սեկցիաների և հանձնաժողովների նիստերին մասնակցելու, ինչպես նաև խորհրդի կողմից նրանց վրա դրված հանձնարարությունները կատարելու համար։

69. Քաղաքային խորհրդի անդամը՝ քաղաքային խորհրդի նիստերին մասնակցելու կամ իր վրա դրված հանձնարարությունը կատարելու հնարավորություն չունենալու դեպքում այդ մասին նախապես հայտնում

և խորհրդին, սեկցիային կամ հանձնաժողովին ըստ պատկանելության։

70. Քաղաքային խորհրդի անդամները բացի քաղաքային խորհրդի, նրա սեկցիաների և հանձնաժողովների նախագահին մասնակցելուց և նրանց հանձնարարությունները կատարելուց, վորպես խորհրդի կողմից ամրացվածներ, աշխատում են ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում կամ ընտրողների էկազմակերպված խմբերում, մասնակցելով ըստ հնարավորության բանվորների, ծառայողների և ընտրողների բոլոր ընդհանուր ժողովին, ինչպես նաև այն ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների արտադրական խորհրդակցու-

թյուններում ու կոնֆերենցիաներում, վորոնց նրանք ամրացված են. նրանք հսկում են նաև հիշյալ հիմնարկների, ձեռնարկությունների և կազմակերպությունների աշխատանքներին, ինչպես նաև հետևում են, վորպեսզի կյանքում կիրարկվեն քաղաքային խորհրդի և իշխանության վերադաս մարմինների վորոշումները, պարզարանելով քաղաքային խորհրդի այս կամ այն ձեռնարկումների և վորոշումների բովանդակությունը։

71. Քաղաքային խորհրդի անդամներն իրավունք ունեն հանձնելու քաղաքային բոլոր հիմնարկներն ու ձեռնարկությունները առաց բացառության, ծանոթանալու նրանց աշխատանքին, չմիջամտելով սակայն, նրանց ընթացիկ գործունեությանը, ինչպես նաև պա-

հանջելով անհրաժեշտ տեղեկություններ ու բացատրություններ, բացի գաղտնի բնույթ ունեցող տեղեկություններից, վերջինք կարող են տրվել միայն քաղաքային խորհրդի նախագահության կարգադրությամբ:

72. Քաղաքային խորհրդի անդամներն իրավունք ունեն իրենց նախաձեռնությամբ քաղաքային խորհրդի, նրա սեկցիաների և հանձնաժողովների քննությանը ներկայացնելու քաղաքային խորհրդի այս կամ այն ձեռնարկումների կամ այդ ձեռնարկումները կյանքում կիրարկելու կարգի վերաբերյալ նախագծեր և առաջարկություններ:

73. Քաղաքային խորհրդի անդամները կարող են խորհրդի անունից հանդես գալ միայն այն դեպքում,

յերբ այդ մասին քաղաքային խորհրդից կամ նրա նախագահությունից լիազորություն են ստացել:

74. Քաղաքային խորհրդի անդամները իրենց պարտականությունները խորհրդում, սեկցիաներում և հանձնաժողովներում կատարում են ձրիարար. այն դեպքում, յերբ այս կանոնադրությամբ նախատեսված պատգամավորական պարտականությունների կատարումը զուգադիպում է աշխատանքի ժամերին, այն հիմնարկները, ձեռնարկությունները կամ կազմակերպությունները, վորտեղ աշխատում է քաղխորհրդի անդամը, իրավունք չունեն խորհրդի անդամ հանդիսացող քանվորի կամ ծառայողի աշխատավարձից վորևե գումար հանելու:

Ծանոթություն: *Յեթե քաղաքային խորհրդի կամ նրա նախագահության հանձնարարությունները կատարելու պատճառով խորհրդի այս կամ այն անդամը մի բանվորական օրից ավելի յերկար ժամանակով ընդհատում է իր աշխատանքը ձեռնարկության, հիմնարկության կամ կազմակերպության մեջ,—խորհրդի հիշյալ անդամը այդ ժամանակի համար վարձատրություն է ստանում քաղաքային բյուջեից:*

75. *Քաղաքային խորհրդի անդամներն իրենց գործունեության մասին հաշիվ են տալիս ընտրողների առաջ առնվազն տարեկան յերկու անգամ այս կանոնադրության* IX*-րդ գլխում մատնանշված կարգով:*

76. *Յեթե քաղաքային խորհրդի անդամը քիչ թե շատ յերկար ժամանակով կամ ընդմիշտ թողնում է իր բնակավայրը տվյալ քաղաքում, ապա նա պարտավոր է այդ մասին հայտնելու մանդատային հանձնաժողովին, վորը խորհրդի անդամի բացակայության ժամանակ քաղաքային խորհրդի կազմի մեջ է մտցնում առաջին փոխանդամին այն ընտրական քաղաքամասի փոխանդամների ցուցակի կարգով, վորտեղ ընտրված է խորհրդի բացակայող անդամը:*

77. *Քաղաքային խորհրդի անդամները չեն կարող ձերբակալվել առանց նախորոք քաղաքային խորհրդի նախագահության, իսկ շտապ դեպքերում—խորհրդի նախագահին տեղեկացնելու:*

78· Քաղաքային խորհրդի փոխանդամները վճռողական ձայնի իրավունք են վայելում, յերբ նրանք փոխանդամների ցուցակի կարգով, քաղաքային խորհրդի անդամների համատարածական թվի բացակայության դեպքում, իսկ այլ դեպքերում ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:

Փոխանդամների վրա տարածվում են քաղաքային խորհրդի անդամների համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

ԳԼՈՒԽ IX

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՄՔ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ·

79· Քաղաքային խորհրդի անդամները հաշիվ են տալիս ընտրողների առաջ հաշվետվություններ լսելու

և հաստատելու համար հատկապես հրավիրվող ժողովներում: Այդ ժողովները գումարվում են խորհրդի կամ նրա նախագահության նախաձեռնությամբ, ինչպես նաև ընտրողների պահանջով:

80· Ընտրողների ժողովի ժամանակի և տեղի մասին հայտարարվում է ժողովից առնվազն յերեք որ առաջ:

81 Ընտրողների ժողովները կայացած են համարվում, յեթե ներկա յե ընտրողների առնվազն 35 տոկոսը: Այն դեպքում, յերբ վերոհիշյալ թվով ընտրողներ չներկայանալու պատճառով ժողովը չի կայանում, ընտրողների յերկրորդ ժողովը կարող է հրավիրվել չը-կայացած առաջին ժողովից առնվազն յերեք որ հետո,

Երկրորդ ժողովը կազմված է համարվում անկախ ներկա յեղող ընտրողների թվից:

82. Ընտրողների ժողովը բաց է անում քաղաքային խորհրդի ներկայացուցիչը, վորին նշանակում է քաղաքային խորհրդի նախագահությունը, ապա ժողովն ընտրում է նախագահություն, վորը ղեկավարում է նիստը:

83. Հաշվետու զեկուցումը քննության է յենթարկվում ընտրողների կողմից, և այդ առթիվ հանվում է վորոշում, վորի մեջ տրվում է քաղաքային խորհրդի գործունեության և խորհրդի առանձին անդամների աշխատանքների գնահատականը. ընտրողների ժողովի վորոշումը կարող է պարունակել իր մեջ՝

ա) մատնանշում խորհրդի աշխատանքի թերությունների մասին.

բ) մատնանշում խորհրդի անդամների աշխատանքի թերությունների.

գ) վորոշում պատգամավորին հետ կանչելու մասին.

84. Քաղաքային խորհրդի անդամները մի շաբաթվա ընթացքում խորհրդի նախագահությանը զեկուցում են ներկայացնում իրենց ընտրողների առաջ հաշիվ տալու մասին:

85. Բացի ընտրողների ժողովներում հաշիվ տալուց, վորը նախատեսված է այս կանոնադրության 79 հոդվածով, քաղաքային խորհրդի անդամները պետք է

40.079

ուղարկեն իրենց ընտրողների յուրաքանչյուր [illegible]
(Հիմնարկներում, ձեռնարկություններում, ընտրող-
ների չկազմակերպված խմբերի ռայոնական ժողովնե-
րում և այլն) քաղաքային խորհրդի աշխատանքների մա-
սին ինֆորմացիա զեկուցում տալու, քաղաքային խոր-
հրդի, նրա սեկցիաների և հանձնաժողովների առաջ
դրված կարեվորագույն հարցերը քննության առնելու
համար, ինչպես նաև քաղաքային խորհրդի աշխատանք-
ների թերությունների և նրանց վերացման մասին ընտ-
րողներից ցուցումներ ստանալու համար:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահի Տեղակալ Հ. ԱԶԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Երևան.

ՀԱՆՐԱՅԻՆ ... Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ—ССРА им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվան